ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

*Հայաստանի քիմիական հանդես*
Химический журнал Армении **76, № 3, 2023** Chemical Journal of Armenia

## ՄՈՒՇԵՂ ՍԻՐՈՒՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

*2023թ. հուլիսի 23-ին 75 տարեկանում կյանքից հեռացավ ճանաչված քիմիկոս, ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ-ի օրգանական քիմիայի ինստիտուտի թիվ 8 լաբորատորիայի վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր Մուշեղ Սիրունի Սարգսյանը: Նա ծնվել է 1948 թ. հունվարի 2-ին ՀՀ Մարտունու շրջանի Սառնաղբյուր գյուղում: Ծնողներն արտագաղթել են Արևելյան Հայաստան Մեծ եղեռնի տարիներին Մուշից և Վանից: 1950 թ. տեղափոխվել են Նոր Խարբերդ ավան: Մուշեղը սովորել է Երևանի 196-րդ դպրոցում: 1971թ.-ին ավարտել է ԵՊՀ-ի քիմիական ֆակուլտետը և, նույն թվականից աշխատանքի անցնելով ՀՀ ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտում, ավագ լաբորանտից հասել է առաջատար գիտ.աշխատողի պաշտոնին: 1978 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ «Реакции винилпропаргильных и этинилаллильных хлоридов, простых и сложных эфиров с реагентами Гриньяра»: Մ. Սարգսյանը 1990թ.-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Закономерности и синтетические аспекты окисления простых эфиров азотной кислотой» թեմայով: Մ. Սարգսյանի աշխատանքները վերաբերում են վինիլպրոպարգիլային համակարգերում տեղակալման ռեակցիաների, եթերների օքսիդացման և հիդրոքսիիմիններում օղակագծային տաուտոմերիայի խնդիրներին: Հայտնաբերել է բութատրիեն-ենինային հալոտրոպիայի երևույթը և քողարկված α-էֆեկտը: Բացահայտել է ազոտական թթվով եթերների օքսիդացման ռեակցիաների օրինաչափությունները: Մշակել է կիտրոնաթթվի ստացման մատչելի եղանակ իզոպրենի արտադրության թափոնների հիման վրա: Վերջին տարիների հետազոտությունները նվիրված էին իմինների, արիլիդեն-, էթոքսիմեթիլիդեն-β-դիկարբոնիլային միացությունների (խալկոններ) և նուկլեաֆիլ C-H*

*թթուների փոխազդեցությունների ուսումնասիրություններին, որի արդյունքում ի հայտ են բերվել բազմաթիվ կարբո- և ազացիկլիկ կառուցվածքի բազմաֆունկցիոնալ տեղակալված միացությունների սինթեզի նոր, մատչելի եղանակներ: Գիտական գործունեությանը զուգահեռ Մուշեղ Սարգսյանը դասախոսել է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ դասավանդելով «Օրգանական քիմիա» առարկան: Անդամակցել է մասնագիտական և գիտական խորհուրդների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 7 թեկնածուական ատենախոսություն, 9 մագիստրոսական թեզ: Մ. Սարգսյանը հեղինակ է 125 գիտական աշխատանքների՝ հոդվածների և հեղինակային վկայագրերի:*

*Մուշեղ Սարգսյանն օժտված էր մարդկային լավագույն հատկանիշներով՝ ազնվությամբ, լավատեսությամբ, մարդկանց օգնելու ցանկությամբ, որով էլ վայելում էր գործընկերների, հարազատների սերն ու հարգանքը: Այդպիսին էլ նա կմնա իրեն ճանաչողների հիշողություններում:*

***ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի ԳՏԿ***
***ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ օրգանական քիմիայի ինստիտուտ***
***«Հայաստանի քիմիական հանդեսի» խմբագրական խորհուրդ***